ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաշվետվությունը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքների պահանջներով:

1. **Բյուջեի եկամուտների կատարողականը**

2025 թվականի Գավառ համայնքի բյուջեի եկամուտները տարեկան ծրագրով նախատեսված 3,163.658.789 դրամի դիմաց փաստացի կատարվել է 1,507,409.521 դրամ, որը կազմում է 47.6 %:

**Վարչական բյուջեի եկամուտները** առաջին եռամսյակի համար նախատեսված 1,539,876.300 դրամի դիմաց փաստացի կազմել է 1,427,981.046 դրամ, որը կազմում է 92.7 տոկոս:

Սեփական եկամուտների դիմաց նախատեսված 455,535.900 դրամի դիմաց փաստացի կատարվել է 344,439.286 դրամ, որը կազմում է 75.6 %:

**Առաջին եռամսյակի կատարողականը ըստ առանձին եկամտատեսակների ունի հետևյալ տեսքը.**

- Գույքային հարկեր անշարժ գույքից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 58,945.297 դրամ՝ կատարվելով 58.4 %-ով, իսկ գույքահարկ փոխադրամիջոցներից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 154,316.379 դրամ՝ կատարվելով 75.4 %-ով:
- Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 7,195.701 դրամ՝ կատարվելով 124.0 %-ով:
- Պետական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 8,559.200 դրամ՝ կատարվելով 114.2 %-ով:
- Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով Գավառ համայնքին նախատեսվել է ֆինանսական համահարթեցման դոտացիա 1,077,210.800 դրամ, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիաներ ՝ազգային նվազարանների գծով/ կազմել է 4.549.200 դրամ, որոնք ամբողջովին ֆինանսավորվել են:
- Գույքի վարձակալությունից վճարները համայնքի բյուջե մուտք է եղել 14,393.416 դրամ՝ կատարվելով 49.9 %-ով:
- Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները կազմել է 1,781,760 դրամ:
- Տեղական վճարների մուտքերը կազմել է 94,837.370դրամ՝ կատարվելով 93.1%-ով:
- Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից մուտքերը կազմել է 1,582.270 դրամ՝ կատարվելով 39.6 %-ով:
- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կազմել է 4,533.854 դրամ՝ կատարվելով 363.3 %-ով:

**Առաջին եռամսյակի** Ֆոնդային մասի եկամուտները՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը փաստացի կազմել է 30,111.078 դրամ, որը կազմում է 30.1 տոկոս:

2. **Բյուջեի ծախսերի կատարողական**

2025 թվականի երկրորդ եռամսյակի վարչական բյուջեի ծախսերի պլանը կազմել է 1,690,206.400 դրամ, որի դիմաց կատարվել է 753,608.122 դրամ, կամ 44.6 %-ով:

Գավառ համայնքի 2025 թ. վարչական բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը.

| **Ծախսերի անվանումը** | Պլան տարեկան | Պլան 2-րդ եռամսյակ | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|
| **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **553342,4** | **292624,3** | **186532,7** | **63,7** |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 440429,6 | 216867,5 | 157437,4 | 72,6 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 9162,0 | 5406,0 | 3139,6 | 58,1 |
| Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ | 103750,8 | 70350,8 | 25955,7 | 36,9 |
| Պաշտպանություն | 2500,0 | 2000,0 | 0,0 | 0,0 |
| Տնտեսական հարաբերություններ այդ թվում՝ | 231624,0 | 135500,0 | 24044,1 | 17,7 |
| Գյուղատնտեսություն | 1000,0 | 1000,0 | 130,2 | 0,0 |
| Ոռոգում | 2000,0 | 2000,0 | 0,0 | 0,0 |
| Ճանապարհային տրանսպորտ | 228624,0 | 132500,0 | 23913,9 | 18,0 |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | 244424,0 | 144680,0 | 100867,5 | 69,7 |
| Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն | 90000,0 | 57500,0 | 33265,9 | 57,9 |
| Առողջապահություն | 3400,0 | 3400,0 | 3093,0 | 91,0 |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | 127672,6 | 72320,8 | 43471,1 | 60,1 |
| Կրթություն | 897129,7 | 513791,3 | 358153,8 | 69,7 |
| Սոցիալական պաշտպանություն | 11640,0 | 6640,0 | 4180,0 | 63,0 |
| Պահուստային ֆոնդ | 923500,0 | 461750,0 | 0,0 | 0,0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3085232,7** | **1690206,4** | **753608,1** | **44,6** |